021.4
Հ-60

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Ա. Ֆ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԱՏԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԻՇԱՐԹԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑ

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԱՆՎԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆԻ

ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ
(1900—1950)

1950
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
31
ԿԻՐԱԿԻ

Госпубличная библиотека Армянской ССР им. А. Мясникяна. Гор. Ереван
„Календарь знаменательных дат". 50 летие со дня рождения знаменитого армянского поэта Наири Заряна

Նաիրի Զարյանը սովետական գրականության ականավոր դեմքերից է, նա որպես քանաստեղծ ձևավորվել է սովետական տարիներին, նրա ստեղծագործությունը սովետական կյանքի արդյունքն է, նրա մեկնաբանությունը սովետական իրականության հետ սերտ կապվելու նրա անկեղծ և ուժեղ ձգտումը, սովետական գաղափարախոսությունը յուրացնելու և այն իր ստեղծագործության մեջ գեղարվեստական գանձերի վերածելու ջանքերը, խաղացել են իրենց վճռական դերը նրա գրական ընդունակությունների զարգացման և տաղանդի վերջնական ձևավորման գործում։

I

Զարյանը ծնվել է 1900 թ. դեկտեմբերի 31-ին, Վանի Խաչակոնիս գյուղում։ Այդտեղ էլ նա առաջել է իր նախնական կրթությունը։ Վեհափայլ չքնաղ բնանկարից, մանկության տարիներից արդեն Հոում է հյուսքի ծաղրությունը։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիների թիրուր ջարդարարները արյունոտ գնացատան են տանում միլիոնավոր հայերի և այդ ահեղ բանասատան անդի ծնողների հետ նա իր շատ հայրենակիցների հետ միասին ապաստան է գտնում Բաքվում։ Այստեղ նրան վիճակվում է ապրել մանկասներում, կյանքի այդ անցած դառն շրջանը ծանր հիշողություններ են թողել նրա մեջ։ Հետագայում վերհիշելով այդ տարիների ծանր ապրումները բանաստեղծն իրավացիորեն առելության զգացմունքով է լցվում՝ ամեհորով ու թշնամանքով յին՝ իր մանկության և ընդհանրապես անցյալի նկատմամբ։

Մեջ ի՞նչն է կապում անցյալին,
Գուցե մեր սրտերը մերկ՝
Ձմեռնա ծոցի պաղ սալին...
Ատում եմ, ավաղ, մանկությունս
Զրկանքով, ամոթով լի։
Եվ ոչինչ, ոչինչ չի կապում ինձ
Ճորտության չարքաշ սալին։

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում նոր կյանքի է կոչում Զարյանին և որոշում նրա կյանքի ուղին։

Դեռևս վորձեր Զարյանը կատարել է պատանեկական տարիներին։ Սակայն սովետական տարիներին է միայն, որ գրականությունը դառնում է նրա համար հիմնական զբաղմունք։ Դասախոսվելով նոր կյանքի ու նոր գաղափարախոսության ոգով, Զարյանը հանգնում է գրելու որպես նոր կյանքի և սովետական գաղափարախոսության երգիչ։

Հայաստանում պրոլետ. գրականության շարժման սկզբնավորման շրջանից՝ 1922 թվից նա հանդիսանում է նրա առաջին և ակտիվ անդամներից։ Այդ տարիներից էլ սկսվում է նրա ընդհանուր տեսակցությունների կյանքը։ Ակզբում Զարյանը գրում է բանաստեղծություններ և պոեմներ։ Հետագայում, նա անցնում է նաև արձակին և դրամատուրգիային, գրում է գեղարվեստական ակնարկներ ու հոդվածներ, գրադրվում՝ թարգմանությամբ։

1935—36 թվերին նա հրատարակում է սովետական իրականությանը և բալշևիկյան կուսկազմին նվիրված «Հրանուշը» և «Նոյեմբերյան օրերին» պոեմները և բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Զրանգի կոպուտը երկրում» բնորոշ վերնագրով։ Հետագա տարիներին նրա ստեղծագործությունը գրական հաստնության է գալիս։ 1930 թվին նա հրատարակում է՝ «Ոուշանի քարափը» նշանավոր պոեմն՝ համատարած կոլեկտիվացման շրջանից, իսկ 1933 թվին անցյալ տարիներին գրած բանաստեղծություններն ու պոեմները ժողովածուն՝ «Հարմանները» վերնագրով։ 1935 թվին՝ «Մերրոյ»-ը բանաստեղծությունների մի փոքրիկ ժողովածու, որը «Ոուշանի քարափի» հետ միասին նշանավորում է նոր, բարձր կետ հեղինակի գրական կյանքում։ Ակնհայտորեն նա հրատարակում է «Հաթալանում վնաի առաջին մասը (1937 թ.), «Հովիտը սրտաց գազաթների» բանաստեղծությունների առաջ ժողովածուն (1939 թ.), Ծարիրհոնի պաշտպանությանը նվիրված «Հյուսեպանդիրը» հավաքուն պոեմն (1940 թ.) և այլն։

Ստեղծագործական այս հարուստ բալանսով է պետս Ն. Զարյանը դիմավորում Սովետական Հայրենական Մեծ պատերազմը։

Քաղցր ես, հող իմ հայրենի,
Չկա քեզնից պատիաո տուն,
Բայց վտանգի ահեղ ժամին,
Որ ապառնում է ինձնամին,
Դու ավելի ես քաղցրանում։

Այս տողերը գրված են պատերազմի հայտարարման առաջին օրը և դրանք որոշում են բանաստեղծի վարքագիծը պատերազմի տարիներին։

Նա իր ստեղծագործական ամբողջ կարողությունն ու թափը ի սպաս դրեց սովետական ժողովուրդի հաղթանակի գործին, հանգես գալով որպես բանաստեղծ-տրիբուն։ Այդ տարիներին նա հաճախ ելույթներ է ունենում բանվորական ժողովներում ու կոլոզնիկների հավաքույթներում և հակաֆաշիստական միտինգներում։ Կարդում է հեղինակի հավաստով իր բանաստեղծություններ, այրելով է ռազմաճակատ՝ սովետական ռազմիկներին և իր բանաստեղծություններով ու պոեմներով զոլնեգրում նրանց մարտական սխրագործությունները և միևնույն հերոսամեներին։

Պատերազմի տարիներին նա հրատարակում է հայրենասիրական բովանդակությամբ մի քանի անուն ժողովածուներ ու առանձին երկեր—«Մարտակոչ» (1941), «Վրեժ» գրամատիկական պոեմակ (1942) «Զայն հայրենական» և «Անմահության պարտ» պոեմները (1943), «Երիկացած հոգով» ժողովածուն (1944), և այլն։ Նույն այդ շրջանում նա աշխատում էր «Արա Գեղեցիկ» պատմական գրամատիկական պոեմայի վրա, որի նյութը վերցված է հին ավանդություններից։

Հետպատերազմյան շրջանում Զարյանը շարունակում է ապրել ստեղծագործական ակտիվ կյանքով, ավարտում է «Հաթալան» լավագույն վեպը, գրում «Ադրյուրի մոտ» կոմեդիան և «Արմենուհի» պոեման։ Այս երեք գրվածքներն էլ պատկերում են կոլխոզ շարժումը իր զարգացման տարբեր էտապներում։

Վերջին տարիներին նրա քանաստեղծություններն ու հրապարակախոսական ելույթները համակված են հակապատերազմական ոգով։ Զարյանը մերկացնում է պատերազմի հրեշներին և պայքարում է խաղաղության հաղթանակի համար։ Զարյանը պարտիայի շարքերն է ընդունվել 1930 թ.։ Նա ղեկավար մասնակցություն է ունեցել գրական կազմակերպությունների աշխատանքներին և մի քանի տարի շարունակ գլխավորել է Գրողների միության աշխատանքը, որպես նախագահ։ Նրա երկերը շատ հրատարակությունն են ունեցել։ Մինչև այժմ Զարյանը հրատարակել է 30-ից ավելի գիրք հայերեն և հինգ գիրք ռուսերեն լեզուներով։ Նրա հարուստ և բեղմնավոր գրական գործունեությունը արժանացել է բարձր գնահատականի, նա պարգևատրվել է «Լենինի», «Պատվո նշան», «Հայրենական պատերազմ» շքանշաններով և «Կովկասի պաշտպանության», «Աշխատանքի արիության համար» մեդալներով։

II

Զարյանի ստեղծագործությունը հարուստ է բովանդակությամբ ու բազմազան գրական ժանրերով։ Նրա երկերը ներքին փոխկապ են արդեականության զգացումով և նրանցում ուժեղ կերպով լսվում է մեր կյանքի զարկերակը։ Սովետական իրականությունը, մասնավորապես սովետահայ իրականությունը, ստացել է իր ցայտուն արտահայտությունը այս հեղինակի ստեղծագործության մեջ։

Հայ ժողովրդի հերոսական պայքարը՝ սովետական կարգերի հաստատման և երջանիկ, սոցիալիստական կյանքի համար և Սովետական Միության ժողովուրդների տասնյակ ախոյտակների բարեկամությունը, ռևոլուցիայի մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի կերպարները մշտապես եղել են ստեղծագործական ներշնչման անսպառ աղբյուր։ Սկսած 20-ական թվականներից այդ գիծը դեռևով խորացել ու ծավալվել է, հասնելով բարձր զարգացման Զարյանի հետագա շրջանի երկերում։ 30-ական թվականների լավագույն գործերից է «Ոուշանի քարափը»։ Այստեղ հեղինակը ռեալիստական ցայտուն գույներով նկարագրել է համատարած կոլեկտիվացման համար մղվող դասակարգային սուր պայքարը և ցույց է տվել կոլեկտիվացման ռևոլուցիոն նշանակությունը մեր գյուղի կյանքում։ Նա պատկերել է կոլխոզ շարժման հերոսների դրական կերպարները Հանդին Ալեքսանի և Գարսևանի։ Պոեմը նոր երևույթ էր հեղինակի ստեղծագործության և սովետահայ գրականության համար, և պատահական չէ, որ այդ երկը բացառիկ հաջողություն ունեցավ մեր ընթերցողի մոտ և դարձավ սովետական գրականության լայն մասնակցությունն վկայող դրվագներից։

Էպիկական մեծ կտավի գործ է նաև նրա «Դյուցազնագիրքը»։ Այս ծավալուն պոեման նվիրված է ընկեր Ստալինի գլխավորած հարիցին հերոսական պայքարին։ Զարյանը ջերմ սիրով և բանաստեղծական ներշնչմամբ է նկարագրել ռևոլուցիայի մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի կերպարները։ Նա հասել է խոշոր գեղարվեստական ընդհանրացումների՝ մարտական տեսարանների ու քաղաքացիական կռվի հերոսների սքանչացուցիչ պատկերման ասպարեզում։

Պոեմի ներածությունն ու վերջերգը՝ «Մտալին» հայտնի բանաստեղծության հետ միասին պատկանում է մեր գեղեցիկ առաջնակարգ երկերի թվին։ Այդ գործերում բանաստեղծը ոգեշունչ պատկերներով կերտել է հանճարեղ առաջնորդի կերպարը և արտահայտել է հայ ժողովրդի բուռն սերն ու երախտագիտության զգացմունքը՝ իր մեծ ազատարարի նկատմամբ։

Երգում եմ քեզ, մեծ Մտալին, դու հարազատ ամենքին,
Դու՝ աղբերի երջանկության ճարտարապետ ու գարրին...
Ազատարար Հոկտեմբերի քայլերն այն ժամ թնդային,

Ընդեց քո ձայնը լենինյան, Լենինի հետ միասին.
Դուք օրնորվան լույս նետեցիք ժողովրդին իմ չոքած,
Դուրս կոշտերիք մահվան սիրից դևակի կյանքի դուռը քաց։
Նա վեր կացավ գոտեպնդված, ոտանից քաշով ահագին,
Ու միացավ կոմունիզմի աշխարհաների բանակին։

Պատերազմի տարիներին Ն. Զարյանը մի շարք հաջող բանաստեղծություններ է նվիրել մեծ Ստալինի կերպարի կերտմանը։ Այդ գրվածքներում նա փառաբանել է բնկեր Ստալինին, որպես սովետական ժողովրդի հաղթանակների կազմակերպիչ և կոմունիզմի հաղթական բանակի մեծ զորավար։

«Զայն հայրենական», «Անմահության պարտ» պոեմներում և մի շարք բանաստեղծությունների մեջ հեղինակը ցայտուն պատկերներով դրսևորել է սովետական ժողովուրդների բուռն հայրենասիրությունը և ռազմամաքառիչ ինքնաբերի միասնությունը։

Իմ հայ ժողովուրդ, այս դու ես այսպես հպարտ, գեղեցիկ,
Անցնում տարազուտ քո համիսներով, քո արևի տակ
Այս դու ես այսօր, որ ունես օջախ և մեծ հայրենիք,
Ջանգվից մինչև Դոն և ծով, սպիտակ։

Հայրենիք հասկացողությունը Զարյանի մոտ լայն է, նա ընդգրկում է սովետական եղբայրական ժողովուրդների կյանքն ու պայքարը։ Սովետական Հայաստանը այդ մեծ հայրենիքի մի անբաժանելի մասն է։ Նա հրճվանքով նկարագրում է Սովետական Հայաստանի ծաղկումը և սոցիալիզմի կառուցման հաջողություններ։ Այդ հաջողությունների մեջ նա տեսնում է ողջ Սովետական Միության հինարարական ֆաին ու կատղությունները։

Սովետական տարիների ընթացքում Հայաստանը կերպարանափոխվել է, նա դարձել է ինդուստրիայի և կոլեկտիվ տնտեսության երկիր, պատմության փերը թողնելով իր դալարոր հետամնացությունը։

Բալշևիկյան պարտիայի և բնկեր Ստալինի ղեկավարությամբ Հայ ժողովուրդը վերածված՝ կերտում է իր նոր կյանքը։ Այս բոլորը ստեղծագործական ոգևորություն է ներշնչում բանաստեղծին։ Նրա բանաստեղծությունների ու պոեմների մեջ, արձակում ու դրամատուրգիայում, վառ գույներով պատկերված է մեր իրականության արագ վերափոխման պրոցեսը, նրա հոգեկան երեք դեպի կոմունիզմի բարձունքները։ Կոմունիզմի կառուցման շնորհ է լցված մեր կյանքը։

Բարձացել է մեր հոդը, անծայրածիր Հայրենիքում,
Վիթխարաթիռն մի ալիք, անմահ մի աղաղակ.
Այդ աղաղակն է լսում, այդ աղաղակն է երգում
Յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր գաղար։

Կառուցման էնտուզիազմով է լցված Սովետական Հայաստանը, որը վերածվել է Սովետական իշխանության շնորհիվ և եղբայրական ժողովուրդների հետ միասին Ստալինյան Սահմանադրության գրոշի տակ պայքարում է երջանիկ ապագայի համար։

Զարյանի այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են, «Վերածնությունը», «Սևանա-ը, «Երևան»-ը և այլն, փառաբանում են մեր ժողովրդի այդ նոր կյանքն ու ստեղծագործական նվաճումները։

III

Զարյանի ստեղծագործական մեջ կարևոր տեղ է գրավում «Հաթալան» վեպը որի ամրողջական հրատարակությունը խոշոր երևույթ է մեր գրական կյանքում։

Այս գրվածքի մեջ հեղինակին հաջողվել է հասնել գեղարվեստական նոր ընդհանրացումների։ Նա ստեղծել է կոլխոզական շարժման հերոսների ցայտուն կերպարներ՝ իրենց նկիրվածությամբ գործին, բոլշևիկյան սկզբունքայնությամբ և քաղաքական մաքրությամբ։

Վեպի համար հեղինակը հիմք է ընդունել այն շրջանը, երբ պարտիայի ղեկավարությամբ պայքար էր մղվում կոլխոզների տնտեսական և քաղաքական ամրացման համար։ Այդ շրջանում կուլակային տարերքը փոխել էին պայքարի ձևերը, կոլխոզների դեմ ունեցած բացահայտ ելույթների փոխարեն նրանք այժմ վերադասում էին հարմարվել, ձևանալ կոլխոզների բարեկամ՝ ներսից այն քայքայելու և պայթիցնելու համար։

Վեպի սյուժետային գիծը ներքինփակցված է կոլխոզների ամրացման համար մղվող այդ սուր պայքարով՝ ընդդեմ հարմարված տարերքի։

Ն. Զարյանը իր վեպում ստեղծել է սովետական հիանալի մարդկանց, պարտիական ու կոլխոզային աշխատողների կերպարների մի ամբողջ պատկերասրահ, ցույց է տվել նրանց ազատ ու հասունությունը՝ կոլխոզային կարգերի ամրացման համար մղած մարտերում։ Պարտադիրոմի մասսայական բաժնի վարիչ Իպատիա Վոնչանը, կոլխոզի նախագահ Վոնչ Համբարյանը, սկզբնական պարտիական կազմակերպության քարտուղար Վասակ Ջորաքյանը և այն այլ պայքարի հերոսները են։ Նրանք նկարագրված են ճշմարիտ ու կենդանի գծերով։ Իրենց ներքին հոգեկան աշխարհի առանձնահատկություններով։ Հեղինակի ջերմ սերը դեպի իր գրական հերոսները հասնում է ընթերցողին և ընթերցողն ապրում է այդ հերոսների հետ, նա բաժանում է նրանց ուրախությունն ու տխրությունը։ Ընթերցողը հուզմունքով է հետևում այդ սովետական մարդկանց պայքարին, հատկապես ապրում է վեպի գլխավոր հերոսի Վոնչ Համբարյանի ճակատագրով, որը պրովոկատիայի էր ենթարկվել թղարվեսված կուլակային տարերի կողմից։

Վեպի ուժն ու նշանակությունն էլ հենց նրանում է, որ Զարյանը ճշմարտացիությամբ նկարագրել է սովետական մարդկանց կերպարները և ցույց է տվել սովետական իրականությունը, պարտիայի ղեկավար դերը՝ կոլխոզների ամրապնդման ու ծաղկման գործում։

Տիրապետելով սոցիալիստական ռևալիզմի արտահայտման գեղարվեստական նոր ձևերին, հեղինակը պատկերում է ոչ միայն իր հերոսների բարձրային-բաղաքական ածը, մանր սեփականատիրական հոգեբանության մնացուկների հաղթահարման պրոցեսը, այլ և հաղորդում է առաջավոր կոլխոզնիկների ռոմանտիկական երազանքը իրենց գյուղի (հետևապես ամբողջ գյուղացիության ու ողջ ժողովրդի) մոտ ապագայի մասին, կոմունիստական հասարակության մասին։

Բնև վեպի թեման ընդգրկում է նախապատերազմյան շրջանի կոլտնտեսական կյանքը, բայց հեղինակը կարողացել է վարպետորեն իր գրվածքը հասակել արդիական շնչով, սովետական ժողովրդի կոմունիզմի համար մղվող այսօրվա պայքարի շնչով։ Այս բոլորը խոսում է վեպի բաղաքական հագեցվածության ու գեղարվեստական բարձր արժանիքների օգտին։

Հետպատերազմյան շրջանում Զարյանը հանդես է գալիս նոր ստեղծագործություններով։

Նրա ստեղծագործության պաթոսը հանդիսանում է սովետական ժողովրդի պայքարը կոմունիզմի կառուցման համար. Նրա երկերը համակված են բոլշևիկյան խոր պարտիականությամբ ու կենսատու սովետական հայրենասիրությամբ։

Իր գրական գործունեության շրջանում Ն. Զարյանն ստեղծել է այնպիսի արժեքավոր երկեր, որոնք հատատուն տեղ են գրավում սովետական գրականության ոսկե ֆոնդի մեջ և վայելում են հայ ընթերցողների լայն շերտերի ջերմ համակրանքը։

Զարյանը ոչ միայն գրական ստեղծագործություններով, այլ և հոդվածներով ու հրապարակային հյուլիսներով ակտիվ պայքար է տարել սովետական գրականության անարդի զարգացման համար։ Նա կարող է իր մասին ասել։

Պայքար, ես քեզ սիրել, երգել եմ,
Կռվել եմ քեզ համ երգերում։
Տանում եմ քո տված վերքերը
Եվ խնդության հիմն եմ գրում։

IV

Ն. Զարյանը նոր պայմաններում շարունակում է հայ կյանքի գրականության լավագույն տրադիցիաները և զարգացնում է այն։ Նրա ստեղծագործական խնդիրները հետևում է քաղաքացիական ռևալուցիոն պաթոսը, որն իր սկիզբն առնում է Հակոբ Հակոբյանի մարտական պոեզիայից, և էպիկական շունչը, որը նրան մտցնում է Հով. Թումանյանի արվեստին։ Եվ այդ երկու տարրերի՝ քաղաքացիական ակտիվ տեմպերամենտի և էպիկական հանգստության միաձուլումը՝ հանդիսանում է Ն. Զարյանի տաղանդի հիմնական առանձնահատկությունը, նրա գրական խառնվածքի էական կողմը։ Նրա տաղանդի այդ երկու կողմերը, մի ամրողջության այդ երկու հատկանշական գծերը իրենց արտահայտությունն են ունեցել հեղինակի դեռևս առաջին շրջանի ստեղծագործություններում և ավելի ծավալուն ձևով արտահայտվել նրա հասուն շրջանի երկերում։

Ն. Զարյանը սովետահայ այն գրողներից է, որը ոչ միայն ունի բեղմնավոր գրիչ, այլ և բազմակողմանի ընդունակություններ։

Նա արդեն աչքի ընկնող արժեքներ է ստեղծել ոչ միայն լիրիկայի, այլև պատմական ու արդիական կյանքը պատկերող պոեմների մեջ, ոչ միայն արձակի, այլև դրամատուրգիայի ասպարեզում։ Նա հանդես է բերել երգիծարանի լուրջ ընդունակություններ և պայքարել գրականության պարզության ու կատարելության համար։ Իր ընդգրկած բոլոր ժանրերում նա ներկայանում է որպես բոլշևիկ-բանաստեղծ, դրող-քաղաքացի, որպես սովետական հայրենասեր։

Նա զգալի ծառայություններ ունի կատարած մարքսմանական գրականության ասպարեզում։ Նրա բարգմանությունների շնորհիվ հայ ընթերցողը հնարավորություն է ունեցել ծանոթանալու Սովետական Միության ժողովուրդների պոեզիայի մի շարք նմուշների ու հատկապես ռուս պոեզիայի՝ Պուշկինի ու Լերմոնտովի, Նեկրասովի և Մայակովսկու, Բադրիցկու և մյուսների ստեղծագործական նմուշներին։

Բանաստեղծ Զարյանն աճել է ռևալ հողի վրա, նա անմիջական շփման մեջ է եղել իր գրչակից ընկերների հետ, սովորել է ոչ միայն հայ և ռուս հարուստ կյանքի գրականությունից (նա երջանկացրեն Պուշկինին ու Բոմանյանին համարում է իր գրական ուսուցիչները), այլ և փոխադարձաբար իր գրչակից ընկերներից, սովետական գրողներից, աշխատել հերինն ռուս սովետական գրականությունից։ Նրա ստեղծագործական ձևավորման ու մտահղացությունների գործում կարևոր դեր են խաղացել ոչ միայն Մաքսիմ Գորկին ու Հակոբ Հակոբյանը, այլև Մայակովսկին ու Բադրիցկին, Չամչյանն ու Սուլեյման Ստալսկին, Շնորհալին ու Քաղեները։

Եվ չնայած այդ ստեղծագործական ժրամների ու ներշնչումներին, Զարյանը մնացել է ինքնատիպ գրող իր ստեղծագործության բոլոր առավելություններով ու թերություններով հանդերձ։

Նրա լավագույն պոեմական հատվածներն են ռևալուցիոն պաթոսը, երևույթների էպիկական ընդգրկումը, կրքոտությունն ու թափը, կենդանի կերպարները ստեղծելու կարողությունը, լիովի ևմոցիոնալությունն ու պարզությունը։

Նրա ստեղծագործությունները խոշոր դաստիարակչական նշանակություն ունեն, բոլշևիկյան կրթություններ ու ժողովրդայնությունը նրա ստեղծագործության կախան կողմն են կազմում։

Զարյանն գտնվում է իր ստեղծագործական ծաղկման շրջանում։ Սովետական հասարակությունը չերմությամբ նշելով սովետահայ ակտիվալոր քանաստեղծի և գրողի, մնդեղան 50-ամյակը՝ հույսով ու հավատով սպասում է նրանից նոր ստեղծագործություններ, առավելության մեծ գարաշրջանին արժանի երկեր, որոնք կպատկերեն սովետական ժողովրդի անդուլ պայքարը՝ կոմունիզմի կառուցման ու խաղաղության հաղթանակի համար։

Ա. ՕՍԿԵՐՉՅԱՆ
(Գիտությունների բեկնածու)

ԻՆՉ ԿԱՐԴԱԼ

Ն. ՉԱՐՅԱՆ. Երկերի ժողովածու հ. 1-ին, 3-րդ և 4-րդ: Հայպետհրատ:
Ն. ՉԱՐՅԱՆ. «Հաթալան», վեպ, 1949 թ.
Н. ЗАРЯН. „Избранное". Москва, 1949 г.
Н. ЗАРЯН. „Аэлаван". Москва, 1950 г.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀԵՏԻՆ ԿԻՑ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵՏ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՏ 00248 Պատվեր 1424. Տիրաժ 1000. — Հայպոլիգրաֆհրատի 6-րդ տպարան, Տերյան 91, Երևան, 1951 թ.

Պատ. խմբագիր՝ Ի. ՆԱՆՈՒՄՅԱՆ

© National Library of Armenia